ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2023 թվականի փետրվարի 17-ի N2-Լ

Լսելով Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գիտահետազոտական և հրատարակչական աշխատանքների կազմակերպման գործընթացի մասին ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանի հաշվետվությունը՝

Գիտական խորհուրդը որոշում է.

1. Համալսարանում գիտահետազոտական և հրատարակչական աշխատանքների կազմակերպման գործընթացը համարել բավարար:
2. Երաշխավորել ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի շրջանակներում հայտարարված մրցույթին ներկայացվող հայտերը:
3. Բարձրացնել գիտական գործունեության արդյունավետությունը՝ շարունակելով մասնակցել ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարված ծրագրերի մրցույթներին:
4. Խրախուսել և նպաստել միջազգային գիտական կառույցների հետ իրականացվող ծրագրերը:
5. Նպաստել բուհում հրատարակվող պարբերականների ընդգրկմանը միջազգային գիտաչափական շտեմարաններում:
6. Կարևորել պրոֆեսորադասախոսական կազմի գիտական հոդվածների հրատարակումը Scopus, Web of Science և այլ հեղինակավոր գիտաչափական շտեմարաններում ընդգրկված պարբերականներում:
7. Խրախուսել երիտասարդ գիտնականների և մագիստրոսների մասնակցությունը գիտական տարբեր ծրագրերին:
8. Շարունակական աշխատանքներ իրականացնել ՈՒԳԸ գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:
9. Նպաստել պրոֆեսորադասախոսական կազմի գիտական շարժունության ապահովմանը

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ